շարժները, վագոնները, հեռախօսներն ու հեռագիրը... Կայարանի շէնքերը թողնում են աւերակների ապաւորութիւն. դռների և պատուհանների փայտեղէն մասերը հանուած են, կոուրները պոկուած, պատերը քանդուած... Համաճարակները շարունակում են հնձել ժողովրդին: Չկայ բժշկական օգնութիւն: Դեղատները թալանուած են: Հիւանդները մեռնում են առանց դեղի ու բժշկական օգնութեան: Փամբակի գիւղերում կան բազմաթիւ սոված ու բոկոտն որբեր, առանց որև է խնամքի: Երջանի դպրոցական կեանքը մեռել է: Բոլոր դպրոցները թալանուած են: Ղըշլախի գեղեցիկ դպրոցի ամբողջ կահկարասիքը այրել են ասկեարները... Բոլոր 8—10 կօօպերատիւները կողոպտուած են»:

Նոյնքան սարսափելի էր դրութիւնը և միւս վայրերում: Նոյեմբեր 22-ից թիւրքերը սկսեցին դատարկել Ալեքսանդրապոլը: Դեկտ. 2 և 3-ին, Հայաստանի կառավարութեան ներկայացուցիչ Խոյեցեանի նախագահութեամբ կազմուած մի յանձնախումբ ընդունեց քաղաքն ու բերդը: Դեկտ. 4-ին առաւօտեան ժամը 5-ին Ղալթախչիից շարժուեց մի հայկական զումարտակ գնդ. Նեստերովսկիի հրամանատարութեան տակ և գրաւեց Ալեքսանդրապոլը: Բերդապետ նշանակուեց գնդ. Դիտիմովը:

Այստեղ ևս՝ ընդհանուր աւեր ու խեղճութիւն. թիւրքերը տարել էին ամէն ինչ, որ կարելի էր եղել շարժել — շոգեշարժ, վագոն, ցորեն, ժողովրդից խլուած պարէնը, բամբակը, տնային իրեր, կայարանների բոլոր գոյքը՝ հեռագրական ու հեռախօսային գործիքներից սկսած մինչև դռներն ու պատուհանները: Բերդը պայթեցրել էին և շատ բան այրել: Քաղաքն ու շրջակայ գիւղերը կողոպտուած էին մինչև վերջին ասեղը: Անյատակ թշուառութիւն էր տիրում ամէն կողմ: Հակառակ Մեհմեդ Ալի փաշայի Հայաստանի կառավարութեան տուած պաշտօնական հաւաստիացումների, թէ դեկտ. 6-ի առաւօտեան ժամը 9-ից սկսած՝ Բրեստ-Լիտովսկի դաշնագրի սահմաններից այս կողմ ո՛չ մի թիւրք ասկեար չի մնալու և թէ կարգադրուած է, որ հետացող ասկեարները ո՛չ մի թալան ու աւերածութիւն չանեն, թիւրքերը հեռանում էին՝ իրենց յետևը թողնելով մահ ու քայքայում...

Աւարը կենտրոնացուում էր Կարսում, ուր հաւաքուած էր հարիւր հազարաւոր փութ բամբակ, 65,000 փութ չաքար, մի քանի տասնեակ հազար եղջիւրաւոր անասուններ, մեծ քանակութեամբ հացահատիկ, կաշեղէն, բուրդ, մանուֆակտուրա, կահ-կարասիք, պատուհաններ ու դռներ...

Ալեքսանդրապոլ-Երևան երկաթուղագիծը, որ յանձնուեց Հայաստանին դեկտ. 5-ին, մերկացուած էր ամէն բանից. կայարանների շէնքերը՝ աւերակ և անբնակելի, ջրակայարանները՝ փչացած, հեռախօսն ու հեռագիրը՝ քանդուած, կամուրջներից շատերը՝ հրոյ ճարակ...

Նոյն տեսարանը և՛ Երևան—Զուլֆա երկաթուղագծի վրա և Երևանի, Էջմիածնի ու Սուրմալուի գաւառների թիւրքերից գրաւուած մասերում: Պարսկաստանից դէպի Կարս ու Էրզրում քաշուող թիւրք զօրամասերը, խուժանացած, ճանապարհին, ահ ու սարսափ էին տարածում, գործում էին բռնութիւններ, կողոպտում ու փչացնում էին հայերի գոյքերը: Երկաթուղային կազմուածքի պակասի պատճառով Նախիջևանում, Ուլուխանլուում,